ՊԱՎԼԻԿՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Փիլ. գիտ. դոկտոր Կ. Ա. ՄԻՐՈՒՄՅԱՆ

Ազանդավորական շարժումները միշտ էլ գտնվել են գիտնականների և հասարակական գիտակցության ուշադրության կենտրոնում։ Այն պատմական երևույթ է, ուստի աղանդների պատմության ուսումնասիրությունը ոչ միայն ճանաչողական, այլև արդիական նշանակություն ունի։

Հայաստանում տարածված աղանդների մեջ յուրահատուկ նշանակություն ուներ պավլիկյան շարժումը։ Ընդսմին, հետազոտողները հիմնականում առաջնորդվել են սոցիոլոգիական սկզբունքներով։ Խորհրդային շրջանի հայ պատմաբանները պավլիկյան շարժումը գիտում էին և՛ որպես դասակարգային, և՛ որպես ազգային-ազատագրական պայքարի արտահայտություն, չնկատելով այդ գնահատականների ներքին հակասականությունը։ Այս կողմից, օտարազգի մասնագետները պավլիկյանությունը քննարկում էին Իյոզանդիայի (իմա՝ համաշխարհային) պատմության տեսանկյունից, իսկ հայ գիտնականները այն գերազանցապես դիտում էին որպես հայ իրականության ծնունդ։ Երկու մոտեցումներն էլ իրական հիմքեր ունեն։ Այլ հարց է, որ դրանցից ոչ մեկը չի կարող բացարձակ համարվել, քանզի երկուսն էլ վերաբերում են միևնույն պատմական երևույթի տարբեր կողմերին։ Ընդ որում, թեև հայ գիտնականները ջանում են պավլիկյան շարժմանը ազգային-ազատագրական պայքարի բնույթ հաղորդել, այնուհանդերձ դա կատարվում է սոցիոլոգիական մեթոդաբանության շրջանակներում։ Այլ կերպ ասած՝ ազգային խնդրակարգը զրկվում է ինքնուրույն նշանակությունից և ենթարկվում հասարակականին կամ այդ երկու հարթությունները դիտվում են իբրև նույնական, ինչը հետազոտական պրակտիկայում հաճախ հանգեցնում է թե՛ հասկացությունների, թե՛ հետազոտական հարթությունների նենգափոխմանը։ Մինչդեռ ազգայինը և հասարակականը պատմության ընթացքում միշտ չէ որ համընկնում են ծավալի և բովանդակության առումով և միշտ չէ որ ազգայինը ենթարկվում է հասարակականին։ Իրական պատմության մեջ դրանք երբեմն փոխվում են իրենց տեղերով, այսինքն՝ ազգայինը որոշիչ նշանակություն է ձեռք բերում։

Վերջերս փորձ է արվել պավլիկյան շարժումը քննարկել մի այլ մեթոդաբանական համադրույթի՝ ազգային կեցության տեսանկյունից։ Եթե սոցիոլոգիական մեթոդաբանությունը խարսխված է հասարակության և հասարակական կեցություն հասկացությունների վրա (որը ենթադրում է իրական հասարակության և սեփական պետականության գոյությունը), ապա նոր մոտեցման դեպքում իբրև այդպիսին դիտվում են ազգ և ազգային կեցություն հասկացությունները (որն արդեն ենթադրում է պետականության և քաղաքական իմաստով հասարակության բացակայություն)։ Ընդսմին, դա բնավ չի նշանակում հասարակական գործոնի անտեսում։ Խոսքն այն մասին է, որ որոշ դեպքերում ազգային գործոնը մղվում է առաջին պլան, ինչը պետք է իր արտացոլումը գտնի նաև մեթոդաբանական դիրքորոշման մակարդակում[1]։

Սոցիոլոգիական մեթոդների, մասնավորապես, դասակարգային պայքարի տեսության բացարձականացումն *ու* դոգմատիզացիան *հանգեցրին*

---

1 Տե՛ս Կ. Ա. Միրումյան. Պավլիկյան շարժումը ազգային կեցության համատեքստում.—Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, գրքակ 2, Երևան, 1995, էջ 49—72։

պավլիկյան շարժման մի շարք առանձնահատկությունների, այդ պատմական երևույթի բովանդակության իրական փոփոխությունների, պավլիկյանների և բյուզանդական կառավարության ու արաբական խալիֆայության փոխհարաբերությունների մեջ տեղի ունեցած տեղաշարժերի անտեսմանը կամ ոչ համարժեք ընկալմանն ու գնահատմանը։ Դրա պատճառներից մեկն այն էր, որ նշված մեթոդներն ու սկզբունքները հետազոտողները ձգտում էին միանշանակ կիրառել շարժման բոլոր փուլերի նկատմամբ, որպես համապարփակ մեթոդաբանական զինանոց։ Ընդսմին, որպես մեկնակետային հետազոտական կաղապար և չափանիշ դիտվում էր շարժման վերջին փուլը։

Սույն հոդվածում այլընտրանքային մեթոդաբանական դիրքերից քննարկվում են պավլիկյան շարժման հետ կապված մի քանի հարցեր, ինչը, մեր կարծիքով, կօգնի որոշակի ճշգրտումներ մտցնել պավլիկյան շարժման մասին մեր պատկերացումների մեջ։ Խոսքը վերաբերում է հիմնականում առկա սկզբնաղբյուրների և գիտական հետազոտությունների նորովի «ընթերցմանն» ու մեկնաբանությանը։

Պավլիկյան աղանդը ծագել է Հայաստանի արևմտյան (հռոմեական) մասում։ VII դարի կեսերին այն վերածվեց ինքնուրույն շարժման, տարածվելով նաև փոքրասիական մարզերում։ Շարժման տարածմանը զգալիորեն նպաստել են հետևյալ հանգամանքները. Արևելա-հռոմեական կայսրության թուլացումը, կայսեր իշխանության սոցիալական հիմքի նվազումը, ռազմաքաղաքական հզորության, տնտեսության և հասարակական կյանքի մյուս ոլորտների անկումը, կենտրոնախույս միտումների ուժեղացումը և այլն, որոնք պայմանավորված էին թե՛ արտաքին ներխուժումներով, թե՛ ներքին ճգնաժամով։ Այդ ամենը, մյուս կողմից, հանգեցրեց սոցիալական հակասությունների սրմանը, մասնավորապես, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների դեմ ուղղված բողոքի զանազան խմորումների։ Վերջին հանգամանքը ընդլայնեց պավլիկյան շարժման սոցիալական բազան, այդ թվում նաև էթնիկ այլ տարրերի հաշվին, այն վերածելով բազմազգ շարժման՝ հայկական էթնոսի գերիշխանությամբ։ Նշված հանգամանքները միաժամանակ շարժմանը հաղորդեցին ընդգծված սոցիալական ուղղվածություն։

VII դարի երկրորդ կեսին կայսրությունը ամեն կերպ ջանում էր կասեցնել աղանդի տարածումը՝ դիմելով նաև բռնի միջոցների, ինչը առաջել կազմակերպված բնույթ ստացավ VIII դարի սկզբներին և հատկապես Ֆիլիպպիկոս-Վարդան կայսեր (711—713) օրոք։ Վերջինս, Թեոփանես Խոստովանողի հաղորդման համաձայն, «արտաքսեց հայերին իր երկրից և ստիպեց բնակվել Մելիտենեում և Զորրորդ Հայքում»[2]։ Այս տեղեկության մեջ որոշակի ճշգրտումներ է մտցնում Միքայել Ասորին. «Հռոմեացիների կայսր Ֆիլիպպիկոսը իր երկրից վտարեց հայերին։ Նրանք դուրս գալով փախչում են տաճիկների (իմա՝ արաբների) մոտ, որոնք նրանց բնակեցնում են Մելիտենեում և նրա շրջակայքում, ինչպես և Զորրորդ Հայքում։ Հայերը շատ բազմանալով, ամրանում են այս վայրերում, դառնալով տաճիկների թագավորության օգնականները և հռոմեացիների կայսրության հակառակորդները (ընդգծումն իմն է—Կ. Մ.)»[3]։

Հր. Բարթիկյանը աղբյուրներում հիշատակված «հայերին» իրավամբ, նույնացնում է հայ պավլիկյանների հետ[4]։

Բյուզանդական աղբյուրների տեղեկությունները հաստատվում են նաև հայկական աղբյուրներով։ Այսպես, կաթողիկոս Հովհան Օձնեցու (717—

---

2 Թեոփանես Խոստովանող. Ժամանակագրություն. Թարգմ. բնագրից, առաջ. և ծանոթ. Հր. Բարթիկյանի. Երևան, 1983, էջ 94։

3 Մեջբերումն ըստ՝ Թեոփանես, ծան. 523։

4 Տե՛ս Р. М. Бартикян. К вопросу о павликианском движении в Византии в первой половине VIII в.—ВВ, т. VIII, М., 1956, с. 127; Նույնի՝ Источники для изучения истории павликианского движения. Ереван, 1961, с. 34:

728) վկայությամբ, եթե սկզբնական շրջանում կայսրության կողմից հալածվող պավլիկյանները թաքնվում էին արաբներից, ապա VIII դարի սկզբներին նրանք «դաշնակից լինելով բռնակալաց կրճատելոյ» «ի դարանամտութեանն իւրեանց սողեալ յորջից՝ յաշխարհամէջս և ի ժողովրդաբնակս համարձակեցան յարձակել տեղիս»[5]։

Այս տեղեկություններից հետևում է, որ VII—VIII դդ. սահմանագլխին կայսրության կողմից հալածվող հայ պավլիկյանները ապաստանում էին Արևելյան (արաբական) Հայաստանում գաղտնի: Երկրորդ՝ Ֆիլիպպիկոս-Վարդան կայսրը կազմակերպեց հայ պավլիկյանների առաջին զանգվածային աքսոր: Երրորդ՝ աքսորված պավլիկյաններին ոչ թե կայսրը տեղավորեց Մելիտենեում և Չորրորդ Հայքում, այլ արաբական իշխանությունները, դրանով իսկ ստեղծելով հակաբյուզանդական պատնեշ։ Չորրորդ՝ VIII դարի երկրորդ տասնամյակի կեսերին դաշինք կնքվեց արաբների և պավլիկյանների միջև, որի հետևանքով վերջիններս դարձան կայսրության կատաղի թշնամիներ։

Ամենայն հավանականությամբ հենց այս ժամանակաշրջանում էլ պավլիկյանությունը ձեռք է բերում նաև ռազմական բնույթ, վերածվելով ռազմաքաղաքական գործոնի։ Հակառակ պարագայում պավլիկյանները դժվար թե կարողանային կատարել սահմանի պաշտպանության պարտականությունները։ Արաբա-բյուզանդական ռազմաքաղաքական առճակատման պայմաններում այդ միջոցառումները ամրապնդում էին խալիֆայության և թուլացնում կայսրության առանց այդ էլ խարխուլ դիրքերը։

Այնուհանդերձ պավլիկյան աղանդը Արևելյան Հայաստանում չվերածվեց դանգվածային շարժման, ինչը բացատրվում է ո՛չ միայն և ո՛չ այնքան արաբների վարած քաղաքականությամբ, որքան կայսրերի քաղաքականության փոփոխությամբ:

VIII դարի 20-ական թթ. Լևոն III Իսավրացին (717—741) արմատապես փոխում է իր քաղաքականությունը պավլիկյանների նկատմամբ։ Այդ շրջադարձի հիմնական պատճառներից մեկն այն էր, որ եկեղեցին շարունակում էր ձգտել ոչ միայն անկախության, այլև գերիշխանության։ Բացի այդ, նախորդ շրջանում եկեղեցին, ի տարբերություն մյուս հասարակական հաստատությունների և խավերի, նյութական առումով ոչ միայն չէր տուժել, այլ հակառակը՝ հզորացել էր։ Լևոն III հասկացավ, որ կայսեր իշխանության ամրապնդման, եկեղեցին իրեն ենթարկելու, ներպետական և ռազմաքաղաքական խնդիրների լուծման համար անհրաժեշտ է լայն սոցիալական բազա ունենալ։

Ստեղծված իրավիճակը և հիշյալ խնդրակարգի կարևորության գիտակցումը պահանջում էին երկրի բոլոր ուժերի, հասարակության բոլոր խավերի ակտիվացում, իսկ դրա համար «անհրաժեշտ էր հիրավի համակայսերական նշանակություն ունեցող գաղափարաքաղաքական գործողություն, որ հասկանալի է բնակչության ամենալայն խավերին...։ Խնդրի լուծումը կայսրերը տեսան պատկերամարտության մեջ, որը դարձավ երկրի բոլոր ուժերի և՛ սահմանազատման, և՛ համախմբման միջոցը»[6]։

Պատկերամարտական տրամադրությունները ժողովրդական գիտակցության մեջ ձևավորվել էին նախորդ դարում, որպես հոգևորականության և բյուզանդական եկեղեցու զորության դեմ ուղղված սոցիալական բողոքի յուրատեսակ ձև։ Միջնորդավորված ձևով այն ուղղված էր նաև կայսեր իշխանության և հասարակական ընտրախավի դեմ։ Լևոն III-ը և նրա հետևորդները դրա մեջ տեսան կայսեր սոցիալական հենարանի ընդլայնման, իշխանության հզորացման և գաղափարական հիմնավորման միջոց։ Նրանք կա-

[5] Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք. Վենետիկ, 1834, էջ 78։

[6] Г. Г. Литаврин: Политическая теория в Византии с середины VII до начала XIII века.—Культура Византии. М., 1989, с. 67.

ղողացան ընդհանրացնել և պարզորոշել նշված տրամադրությունները և ուղղել իրենց համար անհրաժեշտ հունով»։

Բացի այդ, պատկերամարտական տրամադրությունները մինչ այդ փորձում էին օգտագործել բանակաթեմերի զինվորական-հողատեր ընտրախավը և հոգևորականությունը մայրաքաղաքի աշխարհիկ և հոգևոր ընտրախավի դեմ պայքարում[8]։ Այս հանգամանքը պետք է որ խթաներ և արագացներ կայսեր դիրքորոշումը։

Միաժամանակ կայսեր ծրագիրը «ազգային համերաշխության» (ի տարբերություն հունա-հռոմեական ունիվերսալիստական գաղափարի), ճնշված և ընչազուրկ խավերի պաշտպանության, քաղաքի և գյուղի ռազմականացման, «ազգային և քրիստոնեական հայրենասիրության միավորման» հենքի վրա կոչված էր միավորել կայսրության ջանքերը արաբական վտանգի խափանման համար[9]։ Այսինքն՝ Լևոն III-ը պատկերամարտությանը հաղորդեց համաքաղաքական ստրատեգիական ծրագրի, պետական պաշտոնական գաղափարախոսության բնույթ և կարգավիճակ։

Անշուշտ, կայսեր պատկերամարտական քաղաքականությունը պետք է տարբերել թե՛ զանգվածային, թե՛ իշխող որոշ խավերի պատկերամարտությունից։ Հասարակական լայն խավերի մոտ այն ձևավորվել էր տարերայնորեն, կրոնադավանաբանական և սոցիալական միտվածություն ուներ, իսկ հասարակական զարգացման (իդեալի) առումով ուղղված էր դեպի պատմական անցյալը՝ վաղ քրիստոնեական համայնքների շրջանը, որը պատկերապաշտություն չգիտեր։ Իշխող առանձին խմբերի համար պատկերամարտությունը քաղաքական գերիշխանության հասնելու միջոց էր, կոնկրետ կուսակցական նպատակների էր ծառայում և վերաբերում էր ներկա իրադրությանը։ Կայսեր համար այն ստացավ ամբողջական պետական-քաղաքական նշանակություն, որի խնդիրն էր արմատապես վերափոխել հասարակական և պետական կյանքը և ուղղված էր դեպի ապագան։

Այսինքն՝ կայսեր քաղաքականության համաշրջական բնույթի շնորհիվ պատկերամարտական տրամադրությունները նպատակաուղղված զարգացում ստացան։ Միաժամանակ դա ընդհանուր գաղափարական դաշտ ստեղծեց թե՛ կայսեր և հասարակական լայն խավերի, թե՛ կայսեր և առանձին իշխող խմբերի միջև «երկխոսության» համար։ Ուստի, թեև ճիշտ է պատկերամարտության նշված ձևերի առանձնացումը, սակայն դա բավարար հիմք չի տալիս դրանք հակադրելու համար։

Պատկերամարտությունը պավլիկյան գաղափարախոսության հիմնարար տարրերից էր հատկապես շարժման սկզբնական փուլում։ Հովհան Օձնեցին վկայում է, որ աղանդը կրոնագաղափարական առումով ևս զարգացման տարբեր փուլեր է անցել. «Ի պատկերամարտութենէ ի խաչամարտութիւն և ի քրիստոսատեցութիւն, և անտուստ յանաստուածութիւն և ի դիւապաշտութիւն»[10]։ Թվում է, որ հենց պավլիկյան աղանդի պատկերամարտական միտվածությունը հիմք հանդիսացավ Լևոն III-ի և շարժման առաջնորդների միջև դաշինքի կնքման համար, որն ամրապնդվեց հետագայում կայսր Կոստանդին V Կոպրոնիմոսի (741—775) օրոք։ Դաշինքի շնորհիվ բյուզանդական կայսրերը ա) չեզոքացրին պավլիկյանների վտանգը կառավարության պաշտոնական նոր կուրսի համար և հակառակորդից դարձրին դաշնակից և բ) հմտորեն օգտագործեցին նրանց ռազմական ուժերը կայսեր շահերի, մասնավորապես, կայսրության սահմանների պաշտպանության համար։ Միա-

---

7 Տե՛ս օրինակ М. Я. Сюзюмов. Первый период иконоборчества.—История Византии, т. 2, М., 1967, с. 52:

8 Տե՛ս М. Я. Сюзюмов. Указ. соч., с. 52—53:

9 Պատկերամարտական քաղաքականության այս կողմի մասին տե՛ս H. Ahrweiler. L' Ideologie politique de l'Empire byzantin. P., 1975, p. 25—36; Տե՛ս նաև Г. Г. Литаврин. Указ. соч., с. 67.

10 Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ Մատենագրութիւնք. Վենետիկ, 1833, էջ 34։

ժամանակ դաշինքը բարենպաստ պայմաններ ստեղծեց նաև պավլիկյանության տարածման և շարժման հզորացման համար։

Ինչ վերաբերում է արաբների և պավլիկյանների նախկին պայմանավորվածությանը, ապա պետք է նկատի ունենալ, որ նախ՝ շարժումը ծագել է Հայաստանի հռոմեական մասում և հիմնականում տարածվել կայսրության մարզերում։ Ուստի աղանդավորականներին առաջին հերթին հետաքրքրում էր կայսրերի, այլ ոչ թե արաբների դիրքորոշումը, քանզի վերջիններիս օգնությանը նրանք դիմում էին կայսեր հալածանքներից փրկվելու նպատակով։ Երկրորդ՝ Արևելյան Հայաստանում պավլիկյանությունը չվերածվեց դանգվածային շարժման։ Դրա գլխավոր պատճառներից մեկը արաբների վարած քաղաքականությունն էր։ Երրորդ՝ պավլիկյան աղանդի տարածման համար Բյուզանդիայում ավելի բարենպաստ պայմաններ կային։

IX դարի երկրորդ տասնամյակից սկսած կայսրերը վերսկսում են հալածանքները, որին պավլիկյանները պատասխանում են զինված ելույթներով. Թովմա Դազիացու ապստամբությանը գործուն մասնակցությամբ (823 թ.)։ Շարժումը աստիճանաբար վերաճում է բացահայտ պատերազմի։ Կայսրության քաղաքականության փոփոխությունը, մեր կարծիքով, դժվար է բացատրել միայն շարժման ռազմաքաղաքական հզորացումով և բյուզանդական եկեղեցու դեմ մղած վճռական պայքարով[11]։ Առավել ևս, որ այդ հզորացումը մեծ մասամբ վերոհիշյալ դաշինքի բնական հետևանքն էր։ Ուստի քաղաքական նոր շրջադարձի գլխավոր պատճառն այն էր, որ պատկերամարտության, հետևաբար, նաև պավլիկյանության առջև դրված խնդիրները հիմնականում լուծված էին։ Այսինքն կայսեր շահերի տեսանկյունից այն սպառել էր իրեն և վերածվել դեստրուկտիվ գործոնի։

Շարժման շահերը նորից համընկան խալիֆայության շահերի հետ և նրանց միջև նոր պայմանագիր կնքվեց։ Սակայն դաշինքը երկար չտևեց. ինչը որոշ հետազոտողներ բացատրում են նրանով, որ իբր «պավլիկյանների արմատական գաղափարները նույնչափ վտանգավոր էին և արաբական իշխող դասակարգերի համար»[12]։ Այսինքն՝ ենթադրվում է, որ դաշինքի խզումը կատարվել է արաբների կողմից։ Մինչդեռ թուլացող խալիֆայությունը հազիվ թե ընտրության մեծ հնարավորություն ուներ. պատմությունը ցույց է տալիս, որ ո՛չ արաբները, ո՛չ էլ բյուզանգացիները չեն խորշել որևէ, այդ թվում նաև պավլիկյանների, ռազմական օժանդակությունից, անկախ դրա սոցիալական և գաղափարական ուղղվածությունից։

Բացի այդ, ինչպես հայտնի է, աղանդապետ Սերգիոսի (Սարգսի) մահից հետո (835 թ.) պավլիկյանները նոր աղանդապետ չեն ընտրում և ամբողջ իշխանությունը փաստորեն կենտրոնանում է զինված ուժերի հրամանատարի (արխոնտի, սպարապետի) ձեռքում։ Շարժման այդ փուլում երկիշխանությունը ոչ միայն ավելորդ էր, այլև վտանգավոր։ Այդ փաստը, մեր կարծիքով, միաժամանակ բացահայտում է շարժման լոկ ռազմաքաղաքական բնույթը։ Գաղափարական գործոնը, բնականաբար, հետին պլան է մղվում, ուստի այն չէր կարող վճռական դեր կատարել պավլիկյանների և արաբների ռազմաքաղաքական բնույթ կրող հարաբերությունների հարցում։

Թվարկած դիտողությունները, մեր կարծիքով, ավելի հավանական են դարձնում այն ենթադրությունը, որ դաշինքը չէր բավարարում նախ և առաջ պավլիկյան առաջնորդներին։ Ընտիր կանոնավոր բանակի առկայությունը և փայլուն հաղթանակները նրանց պետք է հանգեցնեին քաղաքական անկախության հռչակման և սեփական պետականության ստեղծման գաղափարին, որն իրականացվեց 843 թ.։ Հետևաբար, եթե խոսելու լինենք պավլիկյանության արմատականության մասին, ապա այս ժամանակահատվածում դա

---

11 Հմմտ՝ Е. Э. Липшиц. Очерки истории византийского общества и культуры: VIII—первая половина IX века. М.—Л., 1961, с. 159—160.

12 Տե՛ս Ե. Տեր-Մինասյան. Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից. Երևան, 1968, էջ 137։

վերաբերում էր ոչ թե գաղափարախոսությանը, այլ գերազանցապես ռազմական ասպարեզում դրսևորած վճռականությանը։

Վերոհիշյալ փաստերը և նկատառումները արդեն իսկ ցույց են տալիս, որ պավլիկյան շարժումը չուներ և չէր կարող ազգային բնույթ ունենալ։ Այդ մասին են վկայում նաև շարժման գաղափարախոսությունն ու համայնքների կառուցման տարածքային և գաղափարախոսական սկզբունքները։ Այնուհանդերձ ենթադրվում էր, որ հայերի համար պավլիկյանությունը միաժամանակ ազգային-ազատագրական պայքար էր բյուզանդացիների և արաբների դեմ։ Այդ կապակցությամբ հետազոտողները սովորաբար հղում են Ղևոնդի «Պատմություն»-ը[13]։ Խոսքը 748 թ. Գրիգոր Մամիկոնյանի կազմակերպած ապստամբության և դրան պավլիկյանների «մասնակցության» մասին է։

Այդ փաստի մեջ հայագետները տեսնում են ինչպես դասակարգային պայքարի դրսևորում, այնպես էլ արաբական լծի դեմ ազատագրական պայքարին մասնակցություն, այսինքն՝ վերագրում են և՛ դասակարգայնության, և՛ ազգային հատկանիշներ։ Իսկ ինչպե՞ս են դրսևորվում նշված հատկանիշները։ Տարածված կարծիքի համաձայն պավլիկյանները, իմանալով Գրիգոր Մամիկոնյանի ապստամբության մասին, որոշում են մասնակցել դրան և այդ նպատակով անցնում են արաբա-բյուզանդական սահմանը և շարժվում դեպի Պոնտոս, որտեղ նրանք միանում են ապստամբ բանակին, ինչը, իբր, տարաձայնություններ առաջացրեց ապստամբության ղեկավարության մեջ, որի հետևանքով Հայաստանի կառավարիչ և սպարապետ Աշոտ Բագրատունին իր զինակից նախարարների հետ հեռանում է ապստամբներից և վերադառնում Հայաստան[14]։

Իբրև տարաձայնությունների և պառակտման հիմնական պատճառ մասնագետները նշում են հայ նախարարների «սարսափը» ժողովրդական զանգվածների առաջ, որովհետև նրանց նպատակն էր «միայն քաղաքական անկախության նվաճումը արաբներից։ Նրանք չէին ցանկանում այդ պայքարին ներգրավել լայն ժողովրդական զանգվածները, առավել ևս «հանցանքի որդիներին»՝ պավլիկյաններին, որոնցից նրանք ավելի էին սարսափում, քան արաբներից, քանզի առաջինների պայքարը կստանար շուտով դասակարգային բնույթ և կուղղվեր իրենց իսկ նախարարների դեմ»[15]։ Ե. Տեր-Մինասյանի համաձայն հայ նախարարները սարսափում էին՝ «չլինի թե պավլիկյանների մասնակցության շնորհիվ շարժումը վերածվի ընդհանուր հակաֆեոդալական ապստամբության»[16]։

Նման մեկնաբանության պարագայում Գրիգոր Մամիկոնյանի ապրստամբությունը հնարավոր չէ այլևս բնութագրել որպես ժողովրդական պայքար արաբական լծի դեմ։ Բացի այդ, անհասկանալի է դառնում, թե սահմանափակ թվով նախարարական զորքը ինչպես էր մարտական գործողություններ վարելու խալիֆայության դեմ։

Միաժամանակ հայագետները չեն հերքում Ղևոնդի տեղեկությունն այն մասին, որ խառնվելով ապստամբներին պավլիկյանները անմիջապես սկսում են թալանել հայրենակիցների՝ ապստամբած հայ նախարարների ունեցվածքը, այլազան բռնություններ գիմել և այլն։ Եթե միջնադարյան պատմիչը իրերը կոչում է իրենց անուններով, ապա գիտնականները դրանց սրակավորում են որպես դասակարգային պայքարի ձև[17]։ Հասկանալի է, որ

---

13 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց. ՍՊբ, 1887, էջ 123։

14 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. 2, Երևան, 1984, էջ 397։ Շրջանցելով Ղևոնդի հաղորդումը, որոշ հետազոտողներ գտնում են, որ Աշոտ Բագրատունին անջատվեց ապստամբներից ոչ թե Պոնտոսում, այլ Տայքում (տե՛ս, նույն տեղում, էջ 335)։

15 Р. М. Бартикян. Источники для изучения..., с. 47.

16 Ե. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 136։

17 Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. 2, էջ 336։

խոսքը լավ զինված և բազմամարդ ջոկատի մասին է, քանզի հակառակ պարագայում անհասկանալի կլիներ, թե ինչպես պավլիկյաններին հաջողվեց կատարել բռնի գործողություններ և պառակտում մտցնել ապստամբության մեջ։ Մյուս կողմից, ստացվում է այնպես, որ մինչև ապստամբներին միանալը՝ դա ազգային-ազատագրական պայքար էր, իսկ միանալուց հետո՝ դասակարգային։

Հարցի լուսաբանման համար կարևոր նշանակություն ունի մի փաստ ևս։ Հր. Բարթիկյանը ուշադրություն է դարձրել Պետրոս Սիկիլիացու այն տեղեկության վրա, որի համաձայն, երբ Հովսեփ-Աֆրոնիտոսը իր աշակերտներով հասնում է Պոնտոսի էպիսկոպոսի գյուղը, ապա «այդ մասին իմանալով, տեղի իշխանավորներից Կրիկորակես անունով աստվածասեր մի այր բազմաթիվ զինվորներով շրջապատեց այն տունը, որտեղ սթևանել էր Սանիի աշակերտը։ Նրա աշակերտներին նա ձերբակալեց, բայց (Հովսեփը) կարողացավ ծածուկ փախչել...»[18]։

Մեր կարծիքով գիտնականը իրավացի է, երբ Պետրոս Սիկիլիացու հիշատակած Կրիկորակեսին նույնացնում է Գրիգոր Մամիկոնյանի հետ[19], բայց դժվար է համաձայնել այն հարցում, թե տեղի է ունեցել պավլիկյանների հալածանք, որ դրանում արտահայտվել է Հայաստանի իշխող դասակարգերի ատելությունը հերետիկոսների նկատմամբ[20]։

Նախ և առաջ հարց է ծագում. իսկ ե՞րբ է Գրիգոր Մամիկոնյանը դիտում հիշատակած գործողություններին՝ մինչ պավլիկյանների միանալը ապստամբներին, թե դրանից հետո։ Մեր կարծիքով դա չէր կարող տեղի ունենալ մինչ միանալը, որովհետև այդ պարագայում, այսինքն՝ «ձերբակալությից» հետո, միացում պարզապես տեղի չէր ունենա։ (Փակագծերում նշեմ, որ միայն այդ դեպքում կարող էին հավանական թվալ հայագետների պնդումները)։ Մնում է ընդունել, որ հիշյալ գործողությունը կատարվել է միանալուց հետո, երբ ակնհայտ դարձավ թե ինչպիսի օգնություն է ուղարկել Կոստանդին V կայսրը[21] և ապստամբության ճակատագիրը արդեն կանխորոշված էր։ Հետևաբար, Գրիգոր Մամիկոնյանի կիրառած պատժամիջոցները պայմանավորված էին ոչ թե «դասակարգային» կամ «գաղափարական» ատելությամբ և նկատառումներով, այլ այն պարզ պատճառով, որ պավլիկյանները օժանդակելու փոխարեն իրականում տապալեցին մեծ դժվարություններով կազմակերպած ապստամբությունը։

Դեպի Պոնտոս պավլիկյանների «փախուստի» (748 թ.)[22] կապակցությամբ Հր. Բարթիկյանը իրավացիորեն հարցնում է, թե «ինչո՞վ բացատրել այն փաստը, որ արաբական խալիֆայության նախկին դաշնակիցները... հանկարծ դարձան խալիֆայության կատաղի թշնամիներ»։ Հարցին պատասխանելու համար, շարունակում է նա, «անհրաժեշտ է, մի կողմից հաշվի առնել խալիֆայության քաղաքականությունը հայերի նկատմամբ VIII դարի առաջին կեսերին, իսկ մյուս կողմից՝ նույն ժամանակաշրջանում Իսավրացիների հարստության ներքին քաղաքականությունը»[23]։

Արաբների նկատմամբ պավլիկյանների վերաբերմունքի փոփոխությունը գիտնականը բացատրում է Հայաստանի տարածքում խալիֆայության հարկային քաղաքականության խստացումով (725 թ.)։ «Դժվար է ենթադրել,— եզրակացնում է նա,— որ խալիֆայության այդ քաղաքականությունը չէր

---

18 Պետրոս Սիկիլիացու Պիտանի պատմություն.— Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա. հ. 1, Երևան, 1981, էջ 758։

19 Տե՛ս Р. М. Бартикян. Источники для изучения..., с. 48.

20 Տե՛ս նույն տեղում։

21 Որոշ հայագետներ ընդունում են Ղևոնդի հաղորդումը Գրիգոր Մամիկոնյանի և կայսեր միջև պայմանավորվածության մասին։

22 Վերոհիշյալ նկատառումների տեսանկյունից պետք է խոսել ոչ թե «փախուստի», այլ ուղևորման մասին։

23 Р. М. Бартикян. Источники для изучения..., с. 43—44.

վերաբերում աղանդավորական-պավլիկյաններին, որոնք հիմնականում զբաղվում էին հողագործությամբ և անասնապահությամբ: Այն չէր կարող դիմադրություն չառաջացնել վերջինների կողմից։ Եվ երբ աղանդավորական-պավլիկյանները իմացան Գրիգոր Մամիկոնյանի ապստամբության մասին արաբների դեմ, նրանք փորձեցին մասնակցել այդ շարժմանը» (ընդգծումը մերն է—Կ. Մ.)[24]։

Մեր կարծիքով նման մեկնաբանության դեպքում ծագում են մի շարք հարցեր։ Նախ՝ արդյո՞ք պավլիկյանները «հանկարծ դարձան խալիֆայության կատաղի թշնամիներ», չէ որ արդեն շուրջ երկու տասնամյակ գոյություն ուներ դաշինք կայսրերի և պավլիկյան առաջնորդների միջև։ Երկրորդ՝ 748 թ. իրադարձությունների լուսաբանման առումով առավել առաջնային նշանակություն ուներ ոչ թե արաբական խալիֆայության, այլ կայսրության քաղաքականությունը։ Երրորդ՝ մինչ այդ հայագետը ճիշտ նշում է, որ դարի սկզբներին Արևելյան Հայաստան փախած պավլիկյանները վայելում էին արաբական իշխանությունների հատուկ հովանավորությունը այն աստիճան, որ հայոց կաթողիկոսի իշխանությունը չէր տարածվում նրանց վրա[25]։ Քանի որ, պավլիկյանները հատուկ զինվորական պարտականություն ունեին և դիտվում էին իբրև բուֆերային ուժ, ապա հազիվ թե կարելի է ճիշտ համարել այն ենթադրությունը, որ նրանց վրա հավասարապես տարածվել է խալիֆայության հարկային նոր քաղաքականությունը։ Չորրորդ՝ պահպանված սկզբնաղբյուրներում, որքան ինձ հայտնի է, տեղեկություն չկա այն մասին, որ պավլիկյան համայնքների հիմնական զբաղվածությունը եղել է հողագործությունը։ Հինգերորդ՝ խալիֆայության հարկային քաղաքականությունը ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի և հայ ժողովրդի, բայց ոչ պավլիկյանների համար։ Ուստի այդ հանգամանքը ևս չէր կարող վճռական դեր խաղալ 748 թ. դեպքերի ժամանակ[26]։

Այսպիսով, թե՛ Ղևոնդի, թե՛ Պետրոս Սիկիլիացու և թե՛ հարակից տրվյալների քննական-համադրական վերլուծությունը վկայում է այն մասին, որ թե՛ Գրիգոր Մամիկոնյանի բանակի, թե՛ պավլիկյան ջոկատի շարժումը դեպի Պոնտոս տեղի է ունեցել Կոստանդին V կայսեր թելադրանքով, որը նույնպես ձգտում էր օգտվել խալիֆայությունում ստեղծված ծանր կացությունից։ Այսինքն՝ պավլիկյանները ոչ թե իրենք են որոշել միանալ ապստամբությանը, երբ արդեն Պոնտոսում էին, այլ հասել են այնտեղ այդ նպատակով որպես կայսեր դաշնակիցներ։

Ապստամբությունը չծավալվեց և պարտության մատնվեց ոչ թե նախարարների «սարսափի» կամ «ատելության» կամ էլ Աշոտ Բագրատունու «դավաճանության» պատճառով, այլ այն պարզ պատճառով, որ կայսեր ռազմական օգնությունը քայքայիչ և ավերիչ դեր խաղաց։ Ուստի ապստամբության ղեկավարության մեջ տարաձայնությունների առաջացումը ճիշտ չէ դիտել որպես անհաջողության հիմնական պատճառ։

Այստեղից հետևում է նաև, որ ո՛չ պավլիկյանների գործողությունները, ո՛չ Գրիգոր Մամիկոնյանի ձեռնարկած պատժամիջոցները իրենց էությամբ դասակարգային պայքարի հետ առնչություն չունեն։

Ցավոք, գիտնականները գրեթե չեն անդրադառնում կայսրության քաղաքականությանը։ Այսպես, թեև հետազոտողների զգալի մասը ընդունում է Լևոն III-ի և պավլիկյան առաջնորդների միջև կնքված դաշինքի գոյությունը, այնուհանդերձ նշված իրողությունը շրջանցվում է, եթե չասենք անտեսվում է, կայսեր և պավլիկյանների հարաբերությունների լուսաբանման ժա-

---

24 Նույն տեղում, էջ 46։

25 Նույն տեղում, էջ 39—40։

26 Քանի որ քննարկվող դարաշրջանում հասարակության ճնշվող մասը գերազանցապես գյուղացիությունն էր կազմում, ուստի դասակարգային պայքարի տեսության համապարփակությունը ընդգծելու համար բոլոր նման դեպքերում համարվում է, որ ընդդիմության կրողները գյուղացիներ են։

ստանակ, մասնավորապես 748 թ. ապստամբության[27] և 752 թ. պավլիկյանների տեղափոխման կապակցությամբ։

Այժմ՝ գիտական գրականության մեջ իշխում է այն մտայնությունը, որ շարժումը ընդգծված հակաբյուզանդական բնույթ ուներ, որ կայսերական իշխանությունները դաժան, բռնի քաղաքականություն են վարել աղանդավորականների նկատմամբ։ Սակայն պահպանված փաստերի վերլուծությունն ու մեկնաբանությունը միաժամանակ ցույց է տալիս, որ այդ ընդհանուր առմամբ ճիշտ տեսակետը չպետք է բացարձականացնել և տարածել շարժման բոլոր փուլերի վրա։

Այսպես, հետազոտողները որպես կանոն վկայակոչում են պավլիկյաններին Բալկաններ տեղափոխելու փաստերը։ Ընդ որում նրանք անտեսում են կայսրության գործողությունները պայմանավորող կոնկրետ պատմական և ռազմաքաղաքական գործոնները, օբյեկտիվ դրդապատճառներն ու միտումները։ Գիտնականները բոլոր դեպքերում հակված են տեսնել հենց տեղահանում[28], այսինքն՝ բռնի աքսորում, բռնագաղթ։ Ընդհանուր կարելի է համարել այն միտքը, թե «հերետիկոսությունն արմատախիլ անելու համար» կայսրերը «հերետիկոսությամբ բռնկված ամբողջ մարզերից, հայրենի շրջաններից դեպի Բալկանները, մասնավորապես Ֆիլիպոպոլ քաղաքի շրջանն էին բռնի կերպով արտաքսում հերետիկոս հայերին» (ընդգծումն իմն է—Կ. Մ.)[29]։

Համարվում է, որ հայ պավլիկյանների զանգվածային առաջին արտաքսումը իրագործեց Կոստանդին V Կոպրոնիմոսը 752 թ., ապա Կոստանդին VI-ը՝ 794 թ.։ Հետագայում նրանց մի ստվար խումբ գաղթեցվեց Սիկիլիա, իսկ Վասիլ I կայսեր օրոք, 885 թ.՝ Իտալիա։ Պավլիկյանների զանգվածային վերջին արտագաղթը, ըստ տարածված կարծիքի, տեղի է ունեցել 970 թ. Հովհան Չմշկիկ կայսեր օրոք։

Մելիտենե և Թեոդոսուպոլիս-Կարին սահմանամերձ քաղաքների հայ պավլիկյաններին Թրակիա «տեղահանման» մասին տեղեկություններ են պահպանվել թե՛ բյուզանդական, թե՛ հայկական աղբյուրներում։ Թեոփանեսը հաղորդում է, որ «նույն տարին (752 թ.) Կոստանդինը Թեոդոսուպոլիսն ու Մելիտենեն առավ և հայերին գերի վերցրեց»։ «Կոստանդին կայսրը,— շարունակում է նա,—Թեոդոսուպոլսից ու Մելիտենեից գաղթեցրած ասորիներին ու հայերին Թրակիայում վերաբնակեցրեց»[30]։

Նիկեփոր Պատրիարքի և Գեորգ Վանականի հաղորդած տեղեկությունները մի շարք կարևոր լրացումներ են պարունակում, որոնք զգալիորեն օգնում են հիշյալ իրողության առավել ճիշտ ընկալմանը և բացատրությանը։ Այսպես, ըստ Նիկեփորի, Կոստանդինը «ներխուժում է Հայաստանի տարածքը և բնակիչների համաձայնությամբ գրավում նրա բերդերը։ Նրանք հայ և ասորի քրիստոնյաներ էին։ Չհանդիպելով որևէ այլազգի թշնամու և խախտելով երդումներով հաստատված ապահովության մասին պայմանները, նա նրանց գաղթեցնում է Թրակիայի գյուղերը» (ընդգծումներն իմն են—Կ. Մ.)[31]։ Իսկ Գեորգ Վանականը հաղորդում է, որ կայսրը արշավում է Ասորիքի կողմերը և «վերցնելով իր ազգականներին՝ հայ և ասորի հերետիկոսներին, Բյուզանդիոն վերաբնակեցրեց» (ընդգծումն իմն է—Կ. Մ.)[32]։ Մի այլ տե-

27 Տե՛ս, օրինակ, Ե. Տեր-Մինասյան. Նշվ. աշխ., էջ 137։

28 Տե՛ս Ե. Տեր-Մինասյան. Նշվ. աշխ., էջ 137։

29 Վ. Կ. Ջալոյան. Հայոց փիլիսոփայության պատմություն. Երևան, 1975, էջ 264։

30 Թեոփանես Խոստովանող. Ժամանակագրություն, էջ 137, 140։ Տե՛ս նաև Նիկեփոր Պատրիարք. Համառոտ պատմություն.—Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 740։

31 Նիկեփոր Պատրիարք. Հակաճառություն ընդդեմ Կոստանդին Կոպրոնիմոսի.—Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 741։ Ընդգծված բառերը Հր. Բարթիկյանը թարգմանում է նաև «հայ և ասորի բնակիչների օժանդակությամբ» (ὁμολογία τῶν προσοικούντων): Տե՛ս Թեոփանես Խոստովանող, ծան. 718։

32 Մեջբերումն ըստ Թեոփանես Խոստովանող, ծան. 718։

զում նա «Ասորիքի կողմերի» փոխարեն նշում է «Հայաստանի և Ասորիքի կողմերը»[33]։

Բյուզանդական աղբյուրների համեմատ Ղևոնդ պատմիչի հաղորդումը պարունակում է մի կարևոր երանգ։ Երբ կայսրը գրավեց Կարինը, գրում է նա, «բազումք ի բնակչաց գաւառացն խնդրեալ յարքայէն, զի ընկեցին զանուր լծոյ ծառայութեանն իսմայելի յանձանց և գնացին զկնի նորա» (ընդգծումն իմն է—Կ. Մ.)[34]։

Թվարկած փաստերի համեմատական վերլուծությունը թույլ է տալիս նշմարել դրանց փոխկապակցվածությունը և դրանց մեջ առկա որոշակի տրամաբանությունը։ Այսպես, Թեոփանեսը լոկ դրանցում է վերոհիշյալ վայրերի գրավումը կայսեր կողմից և հայերի ու ասորիների գերեվարումը, գաղթեցումը և վերաբնակեցումը։ Նիկեփորը դրան ավելացնում է, որ գրավումը կատարվել է տեղի բնակիչների՝ քրիստոնյաների համաձայնությամբ և օժանդակությամբ։ Դեորդ Վանականը երկու ճշտումներ է մտցնում այդ տեղեկությունների մեջ. ա) տեղի բնակիչները ոչ թե ուղղադավան քրիստոնյաներ էին, այլ հերետիկոսներ, այսինքն՝ պավլիկյաններ և բ) այդ հերետիկոսները կայսեր «ազգականներն» էին, այսինքն՝ դաշնակիցները։ Ամենայն հավանականությամբ Դեորգ Վանականը երկրորդ դեպքում մատնանշում է կայսեր և պավլիկյանների դաշնակից լինելու հանգամանքը։ Եվ վերջապես Ղևոնդը կարծես վերջակետ է դնում ճշգրտումների տրամաբանական շղթայի մեջ. պարզվում է, որ կայսրը ոչ թե ինքնակամ է որոշել տեղափոխել պավլիկյաններին, այլ ընդառաջ է գնացել նրանց խնդրանքին։

Առաջադրած նկատառումներն ու դիտարկումները բացատրում են նաև այն հարցը, թե ինչու հայերը օժանդակեցին բյուզանդական զորքերին։ Չէ՞ որ խոսքը սահմանամերձ քաղաքների և վայրերի մասին էր և արաբները հետագայում դժվար թե անպատիժ թողնեին նրանց «դավաճանության» համար։ Իրավիճակը պարզվում է, եթե նկատի ունենանք, որ խոսքը ոչ թե հայության, այլ հայ պավլիկյանների մասին է։ Բյուզանդական զորքերը չէին կարող երկար պաշտպանել նվաճած տարածքը, ուստի հայ և ասորի պավլիկյաններին մնում էր խնդրել կայսրին իրենց տեղափոխել կայսրության տարածքը։ Կոստանդին V-ը համաձայնվում է, բայց նրանց տեղափոխում է կայսրության ոչ թե ներքին մարզերը, այլ Թրակիա՝ կայսրության մի այլ սահման, որտեղ նրանք հիմնեցին առաջին պավլիկյան համայնքը Եվրոպայում և տարածեցին իրենց աղանդը[35]։ Այսինքն այդ միջոցառումը կայսրը ենթարկեց պետության շահերին, նպատակ ունենալով օգտագործել պավլիկյանների զինված ուժը արևմտյան սահմանը ամրապնդելու համար։

Չի բացառվում, որ պավլիկյանների խնդրանքը կամ նախնական պայմանավորվածությունը վերաբերում էր կայսրության բուն տարածքին, սակայն ստրատեգիական, ռազմաքաղաքական և կրոնագաղափարական նկատառումներից ելնելով կայսրը փոխում է իր մտադրությունը[36]։ Հավանաբար կայսեր դիրքորոշման փոփոխությանն են վերաբերում Նիկեփոր Պատրիարքի վերոհիշյալ խոսքերը կայսեր «երդումներով հաստատված ապահովության» պայմանների խախտման մասին[37]։

Հետևաբար, թե՛ պավլիկյանների օժանդակությունն ու դիմումը կայսրին, թե՛ վերջինիս համաձայնությունը միանգամայն հասկանալի է, եթե հաշվի առնենք նրանց միջև գոյություն ունեցող դաշինքը։ Այսինքն՝ տեղի է ունեցել ոչ թե տեղահանում (դեպորտացիա), բռնի տեղաշարժում, այլ տեղափոխում։ Մինչդեռ հետազոտողները հաճախ շփոթում են այդ հասկացությունները։ Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ «Կոստանդինն սկսեց

33 Տե՛ս նույն տեղում։

34 Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, էջ 129։

35 Տե՛ս Թեոփանես Խոստովանող. ժամանակագրություն, էջ 140։

36 Հայտնի է, որ կայսեր «ազգակցական» վերաբերմունքը պավլիկյանների նկատմամբ դժգոհություններ առաջացրեց բյուզանդական զորքի մեջ։

37 Տե՛ս նաև Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 741 (ծան. 4)։

կառուցել Թրակիայի քաղաքները, որտեղ բնակեցնում է մելիտենեցվոց քաղաքից և Թեոդոսուպոլսից գաղթեցրած ասորիներին և հայերին, սիրալիր կերպով նվիրելով նրանց կարիքներին անհրաժեշտ ամեն ինչ»[38]։

Այսպիսով, 752 թ. պավլիկյանների տեղափոխումը և վերաբնակեցումը Թրակիայում հարիվ թե ճիշտ է բնութագրել որպես կայսեր բռնության, հալածանքի քաղաքականության արտահայտություն, որպես բռնագաղթ, բռնի աքսորում, տեղահանում։ Նշված իրողությունը ավելի ճիշտ կլինի բնութագրել որպես կայսեր և պավլիկյանների միջև կնքված դաշինքի տրամաբանական հետևանք։

Կատարած վերլուծությունն ու առաջադրած նկատառումները բնավ հիմք չեն տալիս դասակարգային պայքարի թե՛ որպես տեսության, թե՛ որպես պատմական երևույթի անտեսման համար։ Խոսքն այդ տեսության բացարձականացման մասին է, որի հետևանքով մարդկության և առանձին ազգերի պատմությունը կամա թե ակամա ներկայացվում են սև ու սպիտակ գույների ոսպնյակի միջով, անտեսվում են պատմական զարգացման բազմաղանությունն ու բազմադիմությունը, կենդանի պատմական ընթացքը ենթարկվում է նախապես տրված մտակաղապարին։

Մյուս կողմից, դա խոչընդոտում է ազգայինի և հասարակականի հարաբերակցության ճիշտ ընկալմանը, քանի որ ազգայինը զրկվում է հետազոտության ինքնուրույն օբյեկտ դառնալու հնարավորությունից, բնականաբար ենթարկվելով հասարակականին։ Սակայն տեսությունն ինքնին ոչ մի մեղք չունի։ Ավելին՝ ցանկացած տեսության բացարձականացումը անհրաժեշտաբար հանգեցնում է միևնույն ճակատագրին՝ մտածողության միակողմանի կաղապարմանը։

Այլ կերպ ասած, սույն հոդվածի հիմնական նպատակը այլ հետազոտական հարթության և մեթոդաբանական դիրքորոշման անհրաժեշտության հիմնավորումն է։ Նման մոտեցման դրսևորումներից մեկը պատմական երևույթների ուսումնասիրության տարբերակված սկզբունքն է, որի բացակայությամբ (մեթոդաբանական գիտակցության մակարդակի վրա) կարելի է բացատրել այն հանգամանքը, որ պավլիկյան շարժման երկու և կես դարտևող պատմությունը, որի ընթացքում այն բազում գաղափարական, քաղաքական, ռազմական և այլ կարգի փոփոխություններ է կրել, որակապես տարբեր փուլեր անցել, վերլուծվում էր միևնույն հետազոտական տեսանկյունից։ Իսկ քանի որ պահպանված տեղեկությունները միշտ չէ, որ հնարավոր էր մշակել միակողմանի, ապա դա հանգեցնում է փաստերի ոչ համարժեք և միտումնավոր մեկնաբանությանը, իսկ մյուս կողմից՝ ներսից խարխլում գաղափարախոսականացված մեթոդաբանական կաղապարը։

Հետազոտական պրակտիկայում այդ ամենը հանգեցնում էր էկլեկտիկության։ Դրա ապացույցներից է, օրինակ, այն, որ գիտնականները մի կողմից ընդունում են, որ պավլիկյանները մասնակցել են հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին, Թովմա Գազիացու հակաֆեոդալական հակակայսերական և Բաբեկի հակախալիֆայական սոցիալ-քաղաքական հակաֆեոդալական ապստամբություններին, իսկ մյուս կողմից՝ օգնել են պատկերամարտ կայսրերին եկեղեցու հավակնությունները զսպելու գործում[39]։ Այսինքն՝ պավլիկյանները մասնակցել են տարբեր, հաճախ հակաբնույթ պատմական գործողությունների։ Բացի առաջին կետից, մյուս թվարկած գործողությունները համապատասխանում են իրականությանը, սակայն դրանք վերաբերում են պավլիկյան շարժման որակապես տարբեր փուլերին և հիմնականում պայմանավորված էին բյուզանդական կայսրերի վարած քաղաքականությամբ։

38 Նիկեփոր Պատրիարք. Համառոտ պատմություն, էջ 740։

39 Տե՛ս նաև՝ Е. Э. Липшиц. Павликианское движение в Византии в VIII и первой половине IX в.—ВВ, V, 1952, с. 55—56, 58, 63; Ս. Ե. Հակոբյան. Հայ գյուղացիության պատմություն. Երևան, 1957, էջ 511—513։ Ս. Մելիք-Բախշյան. Հայաստանը

К ВОПРОСУ О ПЕРЕОЦЕНКЕ ПАВЛИКИАНСКОГО ДВИЖЕНИЯ

Доктор филос. наук К. А. МИРУМЯН

Резюме

Еретические движения, в том числе павликианская ересь, в советской историографии рассматривались как специфическая форма классовой борьбы. В статье на основе новой методологической установки показывается, что оперирование социологической методологией как универсальным исследовательским инструментарием затеняет многие стороны исторического процесса и мешает их адекватной оценке. На фоне концептуального освещения этапов развития павликианства и на основе нового «прочтения» первоисточников и научной литературы показывается необходимость дифференцированного подхода к каждому этапу движения. На примере событий 748 г. (восстание Григора Мамиконяна и «участие» в нем павликиан) и 752 г. (захват Константином V приграничных городов Мелитены и Карина—Феодосиополиса и «депортация» павликиан на Балканы) показывается несостоятельность оценок, существующих в арменоведении. В частности обосновывается, что 1) павликиане не сами решили принять участие в восстании, а примкнули к нему по указке византийского императора; 2) грабеж имущества и насилия, учиненные павликианами над восставшими нахарарами, в данном конкретном случае ничего общего не имели с классовой борьбой; 3) судьба восстания была предрешена не расколом, возникшем в руководстве восстанием, а пагубными действиями павликианских отрядов. Относительно событий 752 г. доказывается, что в отличие от других в данном случае имела место не депортация, как принято считать, а добровольное переселение по просьбе самих же павликиан. В статье проводится мысль, что во взаимоотношениях павликиан с империей и халифатом определяющим фактором была политика византийских императоров

VII—IX դդ. Երևան, 1968, էջ 235—240։ Գ. Տ. Խրլոպյան. Հայ սոցիալական իմաստասիրության պատմություն. Երևան, 1978, էջ 365։